

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԶԳՈՐԾՈՂ
ԵՐԿՀԱՐԿԱՆԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Լրամշակված տարբերակ)



Նախաձեռնող՝
Վարդենիսի
համայնքապետարան
ՇՄԱԳ հաշվետվության մշակող՝
«Էկոնոմ Էկո ՍՊԸ»

Երևան, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	4
2. ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	4
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ.....	8
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	9
4.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները	9
4.2 Սեյսմիկա և երկրաբանություն	10
4.4 Հողային ռեսուրսներ.....	10
4.5 Զրային ռեսուրսներ.....	11
4.6 Կենսաբազմազություն.....	19
4.7 Պատմության և մշակութային հուշարձաններ.....	19
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ).....	19
5.1 Գործունեության ընդհանուր նկարագիր և տեխնիկատնտեսական ցուցանիշներ.....	19
6. ԿՈՄՈՒՆԱԼ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ/ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ.....	21
7. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ	24
7.1 Շինարարության ժամանակացույցի հաշվարկ.....	25
7.2 Ինժեներա-տեխնիկական և բանվորական անձնակազմ	27
7.3 Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի պաշտպանություն	28
7.4 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը.....	29
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	30
8.1 Ազդեցությունների ընդհանուր նկարագիր	30
8.2 Արտանետումների աղբյուրները.....	30
8.3 Մթնոլորտային օդ	30
8.4 Զրային ռեսուրսներ.....	31
8.5 Հողային ռեսուրսներ.....	31
8.6 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը	31
8.7 Հակահրդեհային միջոցառումներ.....	31
8.8 Աղմուկ և թրթռում	31
8.9 Թափոնների կառավարում	31
9. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ.....	31
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ).....	38
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ/ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	41
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	

ԳՐՈՒԹՅՈՒՆ	4
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	5
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ	5
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԵՎ ԿՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ	6
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	6

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախաձեռնող	Վարդենիսի համայնքապետարան
Նախաձեռնողի հասցեն՝	Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարդենիս Հ. Անդրեասյան 4 E-mail. vardenis.gegharguniq@mta.gov.am
Նախատեսվող գործունեության հասցեն՝	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք, Վարդենիս քաղաք, Հ. Արզոյան փողոց համար 49 հասցե
Հեռախոս՝	(0269)22031
ՇՄԱԳ հաշվետվության մշակման խորհրդատու՝	«Էկոնոմ Էկո» ՍՊԸ, հեռ.՝ +374 93401840 Էլ. հասցե՝ economecoeia@gmail.com
Հողամասի ընդհանուր մակերեսը	1873 . 10 քմ

2. ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-211, 27.11.2006 թ.) -կարգավորում է ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Քուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.): Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը,

բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.): Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.): Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.): Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

Ջրային օրենսգիրք (2002թ.): Ջրային օրենսգրքի խնդիրներն են ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման մեխանիզմների ստեղծումը, ջրային ռեսուրսների պահպանումն ու պաշտպանությունը՝ ապահովելով աղտոտման նվազեցումը, ջրերի ստանդարտների ու ազգային ջրային պաշարի մակարդակի պահպանումը և

վերահսկողության իրականացումը, ջրերի վնասակար ներգործության կանխարգելումը, ջրային ռեսուրսների հաշվառման ապահովումը՝ օգտագործելով արդի նորագույն տեխնոլոգիաներ, մասնավորապես տվյալների առցանց փոխանցմամբ հոսքաչափական սարքավորումներ, բնակչությանն ու տնտեսությանը կարգավորվող սակագներով անհրաժեշտ քանակի և որակի ջրով ապահովումը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անվտանգ ու անխափան աշխատանքը և դրանց օգտագործման ու պահպանման բնականոն պայմանների ապահովումը և վերահսկողության իրականացումը, հիդրոտեխնիկական կառույցների անվտանգ և անխափան օգտագործման ու պահպանման պայմանների ապահովումը և վերահսկողության իրականացումը, ջրային համակարգերի կառավարման կազմակերպումը, պահպանումը և զարգացումը, ստորերկրյա ջրային մարմինների համար լավ կարգավիճակի, մակերևութային ջրային մարմինների համար առնվազն լավ կարգավիճակի, իսկ խիստ փոփոխված ջրային մարմինների համար՝ պոտենցիալ լավ կամ միջակ կարգավիճակի ապահովումը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998): Կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999թ.): Սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

«Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ Օրենքը (ՀՕ-376-Ն՝ 2002թ. հունիսի 12): Կարգավորում է սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև այլ օրենքներով և իրավական ակտերով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք՝ – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

Համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-

110-Ն օրենքի համապատասխան դրույթները:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 1999 թ. և լրամշակված 2022 թ.))- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998 թ.): Ներառում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011 թ.)-կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:

ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N72-Ն որոշում՝ «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N71-Ն որոշում՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում՝ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 781-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական

պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»

ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. N1396-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի n 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախատեսվող գործունեության նպատակն է ՀՀ Գեղարքունիքի մարզի, Վարդենիս համայնքի, Վարդենիս քաղաքի , Հ. Արզոյան փողոց համարի 49 հասցեում տեղակայված մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի նպատակային և գործառնական նշանակությունների արդյունավետ իրացումը՝ իրականացնելով ժամանակակից ճարտարապետական լուծումներով կառուցապատում:

Նշված գործունեության իրականացման համար մշակվել է աշխատանքային նախագիծը՝ համաձայն Վարդենիս համայնքի ղեկավարի կողմից 14. **12 2022**-ին տրված N 150

ճարտարապետահատակագծային առաջադրանքով նախատեսված է մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի նախագծի մշակում՝ N 1223582 վկայականով տրված 05-005-147-014 կադաստրային ծածկագրով: Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Ներկայացված նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով՝ 12 հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի գ ենթակետով :

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ, որոնք կմեղմեն, նվազագույնի կհասցնեն կամ կբացառեն հնարավոր բացասական ազդեցությունները: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված

տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական տարածքում:

Պատմական ակնարկ: Վարդենիսը Հայաստան աշխարհի հնագույն բնակավայրերից է: Այն եղել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի Սոթք գավառի կազմում: 1930 թ կազմավորվել է Վարդենիսի շրջանը, որի վարչական կենտրոնը եղել է ավան Վարդենիսը, այժմ՝ քաղաք Վարդենիսը: Քաղաքի նախկին անվանումները՝ Վասակաշեն, Ոսկեշեն, իսկ 1969 թ-ից անվանվեց Վարդենիս:

Աշխարհագրական նկարագիր: Վարդենիսի շրջանը գտնվում է Սևանի ավազանի հարավարևելյան մասում՝ Սևանի, Արևելյան Սևանի և Վարդենիսի լեռնաշղթաների միջև: Տարածքում է Մասրիկի դաշտը: Ունի 1900-3522մ (Վարդենիս լեռ) բարձրություն: Գերակշռում է լեռնային մակերևույթը: Կան ոսկու, շինանյութի, տորֆի հանքավայրեր: Տիրապետում են լեռնատափաստանային և լեռնամարգագետնային լանդշաֆտները: Տարածքով հոսում են Մասրիկ, Փամբակ, Դարա և այլ գետեր:



Ընդհանուր տեղեկություններ:

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից	
1.1) Այրք -8 կմ	
1.2) Ներքին Շորժա – 13 կմ	
1.3) Վերին Շորժա – 16 կմ	
3.Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	170կմ
3.2) մարզկենտրոնից (կմ)	75 կմ
3.3) պետական սահմանիցուղիղ գծով (կմ)	16կմ
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	Անցնում է համայնքով
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	2,45կմ
4.Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	2300մ
5.Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	13265,05
6. Սահմանակից համայնքների անվանումները	Ակունք, Մեծ Մասրիկ, Խաչաղբյուր,

	Վանեվան, Լուսակունք, Տորֆավան, Շատջրեք, Սոթք
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	vardenismer@mail.ru
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	Vardenis.am
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	093330115
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	2-20-31
11. Համայնքի հեռախոսային կոդը	0269
12. Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Այո
15. Բնակչության թիվը	2018թ -13917 մարդ

4.2 Սեյսմիկա և երկրաբանություն

Համաձայն Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ 2020թ. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի՝ մարզի ողջ տարածքը գտնվում է սեյսմիկ վտանգավորության գոտում (1-3-րդ գոտիականության): Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, բացակայում են: Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տարածքը գտնվում է I I սեյսմիկ գոտում : Տեղամասի հաշվարկային սեյսմիկությունը ըստ սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի՝ 0.4g:

4.3 Կլիման և օդային ավազան
Շրջանը աչքի է ընկնում չորությամբ, ինչպես նաև ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն բացարձակ ջերմաստիճանը կազմում է +30



աստիճան, իսկ բացարձակ նվազագույնը -29 աստիճան:

Գործունեության տարածքի Կլիմայական բնութագրի համար հիմք է հանդիսացել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի հունվարի 15-ի N 03-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-01-2024 «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը, որոնցով հաստատված «Վարդենիս» և «Մասրիկ» օդերևութաբանական կայանի կլիմայական տարրերի արժեքները ներկայացված են ստորև աղյուսակներում.

Աղյուսակ 1. Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Վարդենիս	-8.3	-6.8	-2.7	4.1	9.5	12.9	16.3	16.1	12.2	6.7	0.9	-5.1	4.7	-29	30

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավություն

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Մասրիկ	76	77	75	69	68	69	67	68	66	70	74	76	71	76	66	67	47

Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումներ

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական օրական առավելագույն մմ													Տեղումների քանակը նոյեմբեր- մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Մասրիկ	19	19	27	37	62	65	43	35	29	43	31	22	432	118	314
	23	29	32	30	44	48	54	72	36	40	35	18	72		

Աղյուսակ 4. Քամի

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								ըստ ուղղությունների	Անդորրի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
Մասրիկ	հունվար	3	3	57	3	7	6	19	2	55	2.3	Արլ	6.4	Արմ	5.2	
		2.2	2.6	3.0	3.4	5.	4.6	5.2	3.5							

						0									
	ապրիլ	3	2	43	3	8	6	32	3	64	3.0				
		3.5	3.0	4.2	4.3	6.1	4.4	4.6	3.6						
	հուլիս	3	2	84	2	1	1	6	1	77	5.0				
		2.9	4.6	6.4	5.1	3.6	3.0	3.3	3.1						
	հոկտեմբեր	2	2	53	3	4	4	29	3	59	2.4				
		2.1	2.9	3.9	3.8	4.6	4.2	4.2	3.5						

Օդային ավազան. Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Հայաստանի հանրապետությունում օդային ավազանի դիտարկումներ են կատարվում շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Վերջինս մթնոլորտային օդի որակի մոնիթորինգն իրականացնում է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) հետ համեմատությամբ:



Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգի շրջանակներում Վարդենիս քաղաքում մթնոլորտային օդի մշտադիտարկումներ չեն կատարվում: Վարդենիս քաղաքի օդային ավազանների աղտոտվածության մասին պատկերացում կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, որում ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից: Հիմք ընդունելով վերը նշված ձեռնարկը, 10.000 - 50.000 բնակչության թիվ ունեցող բնակավայրերի համար մթնոլորտային օդում ֆոնային կոնցենտրացիան կարելի է սահմանել որպես՝ փոշի՝ 0,095 մգ/մ³, ծծմբի երկօքսիդինը 0.006 մգ/մ³, ազոտի երկօքսիդինը՝ 0.033

մգ/մ³, ածխածնի օքսիդինը՝ 1.1 մգ/մ³։ Սույն ցուցանիշները տարածվում են նախատեսվող գործունեության տարածքի վրա, հաշվի անելով, որ այն գտնվում է Վարդենիս քաղաքում, որի բնակչությունը կազմում է 2018թ. տվյալներով 13917 մարդ։

Ժամանակավոր առաջարկություններ «Անասկար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50-100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Նախատեսվող գործունեության արդյունքում՝ ԲԿՊ-ով սահմանված միջոցառումների պատշաճ իրականացմամբ, օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի կանխատեսվում։

4.4 Հողային ռեսուրսներ




Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով։ Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության

նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն։

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է հորատման եղանակով ֆոնդային նյութերի համադրմամբ, գրունտների լաբորատոր հետազոտությամբ։ Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երկու շերտ։ Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները։

- **Շերտ 1** Հողաբուսական շերտ ավազակավի, կավավազի լցոնով : Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն I(9a) կարգ է: Ավազակավի, կավավազի առկայությունը խոչընդոտում է տարածքում հողի բերրի շերտի ձևավորմանը:
- **Շերտ-2** **Կավ** պինդ թանձրությամբ, բացից մինչև մուգ շագանակագույն,խճի և մանրախճի պարունակությամբ 10-15%, մանրամիջահատիկ, հոծ: Էյյուվիալ-Դեյյուվիալ-պրոյյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն III (8^a) կարգ է:



- **Շերտ-3** Տարբեր ապարների մանրախճային նստվածքներ մանրաբեկորների պարունակությամբ ավազակավային, կավավազային լցոնումով 20-35%: Լցոնումը մուգ, շագանակագույն, սպիտակահողագույն, պինդ թանձրության: Դրանք ժամանակակից դեյյուվիալ-պրոյյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (13) IV կարգ է :

Ուսումնասիրվող տարածքում իրականացվելու է բնահողի համահարթեցում՝ 6525 մ² , տարածքում բուսահողի առկա չէ , իրականացվելու է 4213 մ² խտածածկույթի փոում:

4.5 Զրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածության մոնիտորինգն իրականավում է «Հիդրոթերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 151 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ: ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Զրի քիմիական որակի



ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:


Ջրերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն՝ անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Սևանի ՋԿՏ-ում: **2023 թվականի 4-րդ եռամսյակի տվյալների համաձայն** Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում. այդ թվում՝ 12 գետային, 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ


գյուղից վերև հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Ստորերկրյա ջրեր: Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ: Վարդենիս, Վաղաշեն, Դարանակ, համայնքների N1809, N1812, N2090, N2095 շատրվանող հորատանքերում դիտվել են ջրի մակարդակների և ծախսերի իջեցումներ, իսկ Վարդենիսի N1811 դիտակետում դիտվել է համեմատաբար կայուն ռեժիմ: Խաչաղբյուրի N2093, Աղբերքի N2091 բնաղբյուրներում նույնպես նկատվել են թույլ իջեցումներ, իսկ Լիճքի N2101 դիտակետում կայուն վիճակ է:

Ստումնասիրվող տարածքում գրունտային ջրեր առկա չեն:



ՀՀ Սևանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



- Մակերևութային ջրերի որակի դասեր
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս

4.6 Կենսաբազմազություն

Ծրագրի իրականացման տարածքը տեղակայված է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական շրջանում: Տեղանքը գտնվում է զարգացած համայնքային միջավայրում, և բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել Վարդենիսի մանկապարտեզի տարածքում: Տարածքը շրջապատված է ոչ խիտ կառուցապատված բնակելի տներով: Կառուցվող մանկապարտեզի տարածքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ հարակից տարածքի ուրբանացված լինելու պատճառով: Տեղանքը բնութագրվում է տարածքի համար բնորոշ ինքնաբերաբար աճող խոտածածկույթով:

4.7 Պատմության և մշակութային հուշարձաններ

Վարդենիսի մանկապարտեզի տեղամասի տեղազննության ընթացքում չեն հայտնաբերվել պամամշակութային արժեք ներկայացնող կոթողներ, հուշարձանների և արձաններ:

«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման համաձայն գործունեության տարածքում և դրան հարակից տարածքներում բացակայում են երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական հուշարձանները:

Նախատեսվող գործունեության տարածքում հնագիտական շերտերի առկայությունը բացառվում է, հաշվի առվելով, որ տարածքը կառուցապատված է, իսկ տեղամասում իրականացված ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են լիցքային գրունտներն ու տեխնածին առաջացումներ:

Կառուցապատվող տարածքում հնագիտական ուսումնասիրությունները, համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի (11.11.1998թ.) հոդված 24-ի դրույթների, չեն պահանջվում:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

5.1 Գործունեության ընդհանուր նկարագիր և տեխնիկատնտեսական ցուցանիշներ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքում (կադաստրային ծածկագիր 05-005-147-014) նախատեսվում է վերակառուցել մանկապարտեզի չգործող մասնաշենքը, համաձայն Վարդենիսի համայնքապետարանի կողմից տրված՝ 14. **12 2022**. N 150 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Թիվ 1 մանկապարտեզի համալիրը հարթ տեղանքի վրա տիպային նախագծով 1980-ական թվականներին իրականացված, թևային 2 նմանատիպ սեկցիաներից և դրանց միջև

միահարկ մասնաշենքից բաղկացած, հասարակական գործառնական նշանակության համալիր կառույց է :

Ամեն մի սեկցիան բաղկացած է 12,0*24,0մ եզրաչափով 1 և 12.0 12,0 եզրաչափերով 2 երկհարկանի մասնաշենքերից, միմյանց հետ կապված անցակառույցով:

Անցակառույցը բաղկացած է միջին տաքանցումի, եզրայինները սանդղավանդակների 3 հատվածամասերից: Մասնաշենքի կոնստրուկտիվ համակարգը լուծված է երկայնական ու լայնական պատերով և միջհարկային ծածկերով, անցակառույցինը՝ և միաձույլ երկաթբետոնե շրջանակներով:

Շրջանակների սյուների հիմքերը առանձին տիպի են, երկաթբետոնե սյունակալներով, իսկ պատերինը ժապավենային՝ խամքարաբետոնից:

Պատերն իրականացված են տուֆաքարի «միդիս » տիպի շարվածքով, ցեմենտավազային շաղախի կիրառմամբ:

Պատերում բացվածքների բարավորները միաձույլ երկաթբետոնից են: Միջհարկային ծածկերը իրականացված են հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերով:

Սանդղավանդակները լուծված են պողպատե թեքահեծաններով, երկաթբետոնե հատավոր աստիճաններով և միաձույլ երկաթբետոնե հարթակներով:

Մասնաշենքերի ու անցակառույցների տանիքները լանջավոր են . փայտե ծալեղային համակարգով, ալիքավոր ասբոշիֆերից և առանձինները պողպատե թիթեղից ծածկույթով, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ:

Պատվիրատուի կողմից նախատեսվում է կատարել մանկապարտեզի համալիրի 12.0*12.0մ արտաքին եզրաչափերով, չգործող երկհարկանի մասնաշենքի նորոգում և 12.0*24.0 մ արտաքին եզրաչափերով մասնաշենքի և դրան կից սանդղավանդակի հատվածամասի ալիքավոր ասբոշիֆերից տանիքածածկույթի փոխարինում:

Մանկապարտեզի համալիրի դիտարկելու մասնաշենքերի և անցակառույցի կրող կոնստրուկցիաները չունեն որևէ նշանակալից ճաքեր , ճկվածքներ և այլ տիպի վտանգավոր վնասվածքներ: Դրանք գտնվում են բավարար տեխնիկական վիճակում :

Չգործող երկհարկանի մասնաշենքի վերակառուցման նվազագույն մակարդակը, նկատի ունենալով վերակառուցելու նպատակը, ըստ գործող ՀՀՇՆ 20.06-2014 նորմերի ընդունված է սեյսմազինվածության մակարդակի ավելացում:

Վերակառուցվող շինությունը տեղադրված է հարթ տեղանքի վրա, և բաղկացած է մի քանի մասնաշենքերից: Շինությունը գրանցված չէ պատմամշակութային հուշարձանների ցանկում: Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզը երկհարկանի է բաղկացած է մի քանի մասնաշենքերից, որոնք իրար միացված են հակասեյսմիկ կարաններով: Չգործող մասնաշենքի վերակառուցումից հետո մանկապարտեզը կունենա 7 խումբ 2-6 տարեկան երեխաների համար նախատեսված:

Սույն նախագծով վերակառուցվում է շենքի չգործող մասնաշենքը, իրականացվում է նոր տանիք բոլոր շենքերի համար, բացառությամբ գործող վերանորոգված մասնաշենքից, 2-րդ մասնաշենք: Քանդվում են հիմնական բոլոր հատակները և իրականացվում են նոր հատակներ:

Ապամոնտաժվում են բոլոր փայտե, մետաղապլաստե, և մետաղական դռները և

տեղադրվում են նորը այլումինից և մետաղապլաստե դռներ: Ապամոնտաժվում են մետաղապլաստե և փայտե պատուհանները և տեղադրվում են նոր մետաղապլաստե պատուհաններով, փոխարինվում են նաև ներքին պատուհանագոգերը: Ճակատային մասերում փոխարինվող բոլոր դռները և պատուհանները փոփոխելուց առաջ անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ չափումներ, որից հետո կատարել պատուհանների և դռների պատվերներ: Նախատեսվում է արտաքին ճակատների լվացում ավազային շթով, արտաքին ճակատային պատի լվացում: Նախատեսվում է տանիքի փայտե կոնստրուկցիաների ամբողջովին ապամոնտաժում և ուժեղացման աշխատանքների ավարտելուց հետո նոր տանիքի մոնտաժում:

Նախագծում նախատեսվում է իրականացնել արտաքին բարեկարգման աշխատանքներ: Իրականացնել նոր սալվածք, նոր ասֆալտապատ ճանապարհներ: Կանաչապատ տարածքի բարեկարգում: Իրականացնել 7 տաղավարներ խմբերի համար: Հողամասի պարագծի 221,4 գծամետր երկարությամբ իրականացվում է նոր մետաղական ցանկապատ: **Ոռոգման ջրամատակարարումը նախատեսվում է ապահովել համայնքի կոմունալ կենցաղային սպասարկման շրջանակներում՝ անհրաժեշտության դեպքում հետագայում հակագործակցելով նաև «Գեղարքունիք» ԶՕԸ-ի հետ:**

Կոնստրուկտորական մաս: Նախագծի կոնստրուկտորական մասը իրականացվել համաձայն՝ պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի, Ճարտարապետական լուծումների, ինժեներա-երկրաբանական հետազննության և համապատասխան ՀՀ գործող նորմերի ու կանոնների:

Համաձայն երկրաբանական եզրակացության հիմքերի համար որպես հիմնատակ են ծառայում խոշորաբեկոր գրունտները $R/O=0.4$ ՄՊա:

Մանկապարտեզը բաղկացած է երեք տիպի բլոկներից կազմված շինությունից, բլոկները միմյանցից բաժանված են սեյսմիկ կարաններով և հավում են 60 աստիճան անկյան տակ:

Մանկապարտեզը բաղկացած է՝ 1 մասնակի ստոստորգետյա հարկից 2.7մ և 1 վերգետյա հարկից, 3,300 մ բարձրությամբ:

Մանկապարտեզի միջնորմները թեթև բետոնե բլոկներից են:

Տանիքը երկլանջ է՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

Մանկապարտեզի բոլոր բլոկների կոնստրուկտիվ տարրերը նախագծված են կրող շրջանակային հիմնակմախքներով միաձույլ երկաթբետոնից: Հիմնակմախքը իրականացված է հետևյալ տարրերից՝ հիմքերը՝ բաղկացած են ուղղանկյունաձև խաչաձևող, ժապավենային հեծաններից 50*60 սմ(հ) կտրվածքով, պատերը ունեն 125 մմ և 400 մմ հաստություն, սյուները՝ 40*40 սմ չափերով: Արտաքին պատերը հանդիսանում են հիմնակմաղքի լցաշար և ամրացվում են, ինչպես և միջնորմերը, հիմնակմաղքի հետ ճկուն կապերով:

Նկուղային հարկում արտաքին պատերը իրականացվում են խամքարաբետոնից 0,4մ հաստության: Մանկապարտեզի հաշվարկը իրականացվել է IMPA-CAMP 2017 R3 հաշվարկային ծրագրի միջոցով: Մասնաշենքերը հաշվարկվել են որպես տարածական մոդելներ՝ ուղղահայաց ստատիկ բեռնվածքների և սեյսմիկ ազդեցության տակ՝ թվային, տառային և վերտիկալ ուղղություններով: Իրականացվել են հետևյալ հաշվարկները՝ առանձին բլոկների սեյսմիկ հաշվարկ ըստ ամրության, ստատիկ հաշվարկ և ամրանավորման հաշվարկ

ըստ ՀՀՇՆ սեսմակայուն շինարարություն Նախագծման նորմերի:

Ինժեներական մաս: Աշխատանքային գծագրերի լրակազմը կատարված է ճարտարապետաշինարարական լուծումների հիման վրա: Ընդանուր հզորությունը կազմում է 7 կՎտ; Շենքի առաջին հարկում նախատեսվում է տեղադրել ԲՎ մուտքբաշխիչ վահանը, որտեղից էլ իրականացվում է շենքի էլեկտրամատակարարումը: Վարդակային ցանցը պաշտպանված է 30mA արտահոսքերը զգալու ունակությամբ սարքերով: Լուսատուների տեղաբաշխումը մշակված են ճարտարապետական լուծումների հիման վրա: Սպառիչների լարումը 380/220Վ; էլ. էներգիայի բաշխումը եռաֆազ ցանցերում նախատեսված է իրականացնել 5 ջղանի մալուխներով L1.12.13,N,PE, միաֆազ ցանցերում՝ 3 ջղանի մալուխներով L1,N,PE:

ԲՎ վահանի մոտ՝ պատին, որպես հողանցման գլխավոր հաղորդաձող (<ԳՀ), լրացուցիչ տեղադրվում է 40 x 4 մմ պղնձե հաղորդաթիթեղը, որը անհրաժեշտ է միացնել արտաքին հողանցման սարքին 40x4 շերտապողպատով: Արտաքին ՀՍ-ն բաղկացած է 8 հատ L=50x50x5մմ 2.5 մ երկարությամբ ցինկապատ պողպատյա ուղղահայաց անկյունակներից, որոնք միմյանցից 3 մ հեռավորությամբ խբվում են գրունտում և միմյանց հետ միացվում 40x4 հատվածքով ցինկապատ շերտապողպատով: Նշված քանակի էլեկտրողներով նորմավորված դիմադրությունը չապահովելու դեպքում անհրաժեշտ է ավելացնել էլեկտրողների քանակը: Խրամուղու մեջ հետ լցվող հողը չպետք է պարունակի քարեր և շինարարական աղբ: Ելնելով տեղանքից հնարավոր է փոխել էլեկտրողների տեղը՝ պահպանելով քանակը: Շենքում նախատեսված է իրականացնել պոտենցիալների հավասարեցման համակարգ: Բաշխիչ վահանի մեջ տեղադրվում է հողանցման գլխավոր հաղորդաթիթեղ (ԳՀՀ): Գլխավոր հաղորդաթիթեղին միացվում են շենք մուտք գործող մետաղական ջրագիծը ե/բ կոնստրուկցիաների ամրանները և մետաղական մալուխատարը: Գլխավոր հաղորդաթիթեղը հողանցվում է արտաքին կոնտուրով: Որպես պաշտպանիչ միջոց նախագծում օգտագործված է TN - C - S համակարգը: Ներանցվող կաբելների PEN ջիղը բաժանվում են N (մեկուսացված) և PE ջիղերին և վերջինս կրկնակի հողանցվում է:

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել համաձայն CH IN 3.05.06-85 և գործող 193-7-ի պահանջների:

Սառը, տաք ջրամատակարարման, կենցաղային կոյուղու հեռացման ցանցերի նախագիծը մշակված է ըստ ճարտարապետական գծագրերի (չափագրված):

Սառը ջրի սնուցումը կատարվում է կից մասնաշենքի ջրամատակարարման ցանցից $\Phi 25$ խողովակով: Խմելու, տնտեսական և հակահրդեհային ջրամատակարարման ցանցերը նախատեսված են համակցված: Տաք ջրամատակարարումը նախատեսված է ջրատաքացուցիչներից (արիստոն տիպի $v=501$, $v=80$ $n=1.5$ կվտ) $\Phi 25$ խողովակով:

Կենցաղային կեղտաջրերը սան-սարքերից ինքնահոս հավաքվում եվ հեռացվում են ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց այնուհետ եվ միացնել բակում գտնվող գործող կոյուղու դիտահորին ցանցերի համար նախատեսված են կոյուղու պլաստմասե խողովակներ $\Phi 150$ - $\Phi 50$ մմ: Ջրամատակարարման, կենցաղային կոյուղու մայուղու ցանցերը նախատեսված են 0.00 նիշի հատակի տակով:

Կոյուղու խողովակների տակ իրականացնել ավազե նախապատրաստական շերտ /հաստ.-

100 մմ/:

Կոյուղու և ջրի համակարգերի մոնիտաժը կատարվում է համապատասխան աշխատանքի դրության գործող նորմերի և կանոնների ՇնուԿ 3.5.01-85:

Վարդենիս քաղաքը սպասարկվում է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից: Համապատասխան պայմանագիրը ներառվել է սույն լրամշակված ՇՄԱԳ հաշվետվությունում(տես Հավելված 7):

Նախատեսվող գործունեության տեխնիկական ցուցանիշներն են՝

Հողի մակերես ` 1873.10 քմ

Կառուցապատման մակերես հողի վրա ` 517.55 քմ

Նկուղային հարկի մակերես ` 105.60 քմ

Կանաչապատման մակերես ` 471.17 քմ

Բարեկարգման աշխատանքեր ` 1200.15 քմ

6. ԿՈՄՈՒՆԱԼ ԿԵՆՑԱԴԱՅԻՆ/ԻՆժԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Նախագծի տվյալ բաժինը կազմված է ճարտարապետա-շինարարական գծագրերի և գործող շինարարական նորմերի հիման վրա: Կլիմայական տվյալներն են ձմռանը՝ ջեռուցման համար հաշվարկային ջերմաստիճանը $t/H=-20^{\circ}\text{C}$, ջեռուցման ժամանակաշրջանի միջին ջերմաստիճանը -1°C , ջեռուցման ժամանակաշրջանի տևողությունը 204 օր: Ամռանը արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանը $t=+36^{\circ}\text{C}$: Ամռան ընթացքում ներքին ջերմաստիճանը ընդունվում է $+22^{\circ}\text{C}$ -ից $+25^{\circ}\text{C}$:

Օդափոխություն

Մանկապարտեզի բոլոր սենյակներում իրականացվում է բնական արտաձուլ: Բնական արտաձուլն օդատարերը բարձրանում են տանիքից 1.0մ վերև:

Օդի արտաձուլը կատարվում է 6150, 6200 կարգավորիչ ճաղավանդակների միջոցով:

Օդափոխության համար օգտագործվել են ցինկապատ օդատարեր:

Տանիքից դուրս բոլոր օդատարերը ջերմամեկուսացվում են: Երեխաներին թարմ օդով ապահովելու համար խմբային սենյակներում և ննջարաններում պատերի վրա տեղադրված են օգտահանիչով օդամղիչներ:

Ջեռուցում և հակահրդեհային համակարգ

Մանկապարտեզի շենքի ջերմամատակարարումն իրականացվում է մանկապարտեզի գոյություն ունեցող ջեռուցման համակարգից: Ջերմատարը ջուր է՝ $T=80^{\circ}\text{C}$ և $T=65^{\circ}\text{C}$ պարամետրերով:

Նախագծում ընդունված է երկխողովականի, հորիզոնական մատակարարումով, ջերմատարի փակուղային շարժումով ջեռուցման համակարգեր: Մատակարարող խողովակներն անցնում են հարկերի հատակների վրայով, դռների մոտ հատակի հաստության միջով ռետինե խողովակներով ջերմամեկուսացումով:

Խողովակաշարերը պոլիպրոպիլենից են:

Որպես ջեռուցման սարքեր օգտագործվել են ալյումինե մարտկոցներ, որոնց ջերմատվությունը 130վտ է:

Յուրաքանչյուր մարտկոցի մատակարարող առբերիչի վրա նախատեսված է ջերմության

կարգավորիչ կափույր, իսկ հետադարձի վրա՝ փակիչ կափույր: Օդահեռացումը համակարգից իրականացվում է մարտկոցների և սանրիկների վրա տեղադրված օդահան ծորանների միջոցով:

Համակարգի դատարկումը կատարվում է ջերնատարի մուտքի մոտ տեղադրված դատարկման ծորաններով փականների միջոցով:

Հրդեհի ահազանգման համակարգ: Սույն նախագծում բոլոր տեխնիկական միջոցառումները մշակված են ՀՀ տարածքում գործող մարդկանց կյանքն ու առողջությունն ապահովող բնապահպանական, սանիտար-հիգիենիկ, հակահրդեհային և այլ նորմերի պահանջներին համապատասխան:

Համակարգի նախագծվող միջոցները մթնոլորտ վնասակար արտանետումներ չեն արտադրում:

Նախագծված է հրդեհի ահազանգման հասցեավորված համակարգ, որը հնարավորություն է տալիս ճշգրտությամբ որոշել տեղեկատվություն՝ հաղորդող՝ ազդասարքի տեղը և համապատասխան ձևով արձագանքել առաջացած տագնապի կամ անսարքության ազդանշաններին: Նախագծված հրդեհի ահազանգման համակարգը նախատեսված է հրդեհի օպերատիվ հայտնաբերման, աշխատակիցներին հրդեհի մասին նախազգուշացման, ինչպես նաև տագնապի ազդականշանի ձևավորման համար՝ նախապես տրված՝ ալգորիթմներին համապատասխան: Բոլոր ազդասարքերը տեղադրված են այն հաշվարկով, որպեսզի անհրաժեշտ ժամանակին հայտնաբերվի ահազանգման տեղամասը: Համակարգն աշխատում է երկու ռեժիմով՝ «Ավտոմատ միացում» և «Ձեռքով միացում»:

ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱՄՆՈՒՑՈՒՄՆ ՈՒ ՀՈՂԱՆՑՈՒՄԸ.

Համաձայն ԷՏԿ (Էլեկտրական սարքերի տեղադրման կանոններ)-98, հրդեհի ահազանգման համակարգը էլեկտրամատակարարման հուսալիության ապահովման մասով հանդիսանում է հատուկ 1-ին դասի էլեկտրաընդունիչ: Սարքերի էլեկտրասնուցումը իրականացվում է փոփոխական հոսանքի աղբյուրից վթարային ռեժիմում ավտոմատ փոխանցմամբ ռեգերվային սնուցման մարտկոցներից (12Վ, 7ԱԺ), որոնք տեղադրված են պահուստային սնուցման աղբյուրների ներսում: Սնուցումը կատարվում է միաֆազ ցանցից 220Վ 50 Հց:

Հրդեհի ահազանգման համակարգի էլեկտրասնուցումը պետք է իրականացվի վահանակի ազատ խմբից: Սարքավորման և սարքերի հողանցումը պետք է կատարվի ՄՆԻՊ 3.05.06-85, է54-98 պահանջներին, արտադրող ձեռնարկությունների տեխնիկական փաստաթղթերին համապատասխան:

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք, Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի ջեռուցման և օդափոխության նախագիծն իրականացված է համաձայն նախագծման առաջադրանքի, ճարտարապետաշինարարական գծագրերի և գործող շինարարական նորմերի և կանոնների:

Ջրամատակարարման, էլեկտրամատակարարման և գազամատակարարման տեխնիկական պայմանները ներկայացված են սույն հաշվետվության հավելվածներ բաժնում:

7.1 Շինարարարության ժամանակացույցի հաշվարկ

Շինարարության կազմակերպման նախագծային աշխատանքները կազմված է նախագծային առաջադերանքի և ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ՀՀՇՆ1-1.01-95, հիմնական դրույթներին համապատասխան և «Շինարարության կազմակերպման նախագիծ» բաժնով ամրագրված դրույթներով:

Քարերի, մետաղական կոնստրուկցիաների և այլ նյութերի մատուցումը տեղադրման հարթակ իրականացվում է 32տ բեռնատվությոն ունեցով ավտոամբարձիչի օգնությամբ, որի տեխնիկական պայմանները թույլ են տալիս նոր շինարարության աշխատանքների իրականացումը:

Շինարարության տևողությունը կազմել է 12 ամիս: Շինարարության նորմատիվ ժամկետում հաշվի են առնված՝

- Նախապատրաստական շրջանի տևողությունը
- Նախագծվող օբյեկտի շինարարությունը
- Կոմպլեքսային փորձարկումներ և անհրաժեշտ գործարկման և կարգաբերման աշխատանքները:
- Առանձին աշխատանքների կատարման տեղափոխման այլ ժամկետը, որը կապված է կոնկրետ արդյունաբերական պայմանների հետ, տեխնոլոգիական ընդմիջումների անհրաժեշտության դեպքում Կապալառուն պետք է կազմի աշխատանքների կատարման գրաֆիկ, համաձայնեցնի և հաստատի պատվիրատուի հետ:

Կառուցման ընդհանուր շինարարության ժամանակացույցը կլինի՝ 12 ամիս, կամ 1 տարի, որի փոփախությունը և ժամկետները ներկայացված են ստորև սխեմայում.

[illegible]

Ապամոնտաժում: Քանդման աշխատանքներն ապամոնտաժման եղանակով իրականացնելու դեպքում հնարավոր կլինի խոսափել բնապահպանական ազդեցություններից, մասնավորապես, աղմուկի և փոշու բարձր մակարդակների առաջացումից և կկրճատվի շինարարական աղբի ծավալները, քանի որ վերը նշված որոշման համաձայն՝ շինարարական կամակերպությունն ապամոնտաժման աշխատանքները կկազմակերպի այնպես, որ առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի շինարարական նյութերը կպահպանվեն և կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում:

Ապամոնտաժման աշխատանքներում կօգտագործվեն ձեռքի կտրող գործիքներ և զողման տեխնիկա՝ բացառելով այլ խոշոր քանդող տեխնիկայի կիրառումը: Շենքի ապամոնտաժման աշխատանքները նախատեսվում է իրականացնել փուլ առ փուլ: Սկզբում կիրականացվեն շենքի տանիքի և փայտե կոնստրուկցիաների, դռների, պատուհանների և մետաղական ճաղավանդակների ապամենտաժումը, որից հետո կիրականացվեն սկզբում երկրորդ հարկի ծածկի ապամոնտաժումը, իսկ այնուհետև՝ կտրող գործիքների օգնությամբ մասնաշենքերի կոնստրուկտիվ կարերի և պատերի քարերի ապամոնտաժման գործողությունները, ինչպես նաև ջրթող խողովակների և ձևավոր մասերի հեռացման աշխատանքները: Այնուհետև նույն հաջորդականությամբ կիրականացվի առաջին հարկի ապամոնտաժումը: Ծածկերի և միջհարկային սալերի ապամոնտաժումը կիրականցնի զողման միջոցով, որից հետո անջատված սալերը և սյուները ճոպանների միջոցով կմիացվեն թրթուռավոր կռունկին և դանդաղ կտեղափոխվեն հրապարակի ազատ տարածություն:

ՔՐԱ/ՄՍԽԱ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԼԱԳԻՐ			
ԱՊՐԵՐԻ, ՀԱՄԻՆ			
Հ/Հ	Նկարագիր	Չափման միավոր	Քանակ
1	Փայտե հատակների քանդում	մ ²	119.8
2	Հատակների կերամիկական սաղիների քանդում	մ ²	18.7
3	Նեղակալ շերտի քանդում 5 սմ	մ ²	137.5
4	Փայտե հատակապարի քանդում 100մմ	մ ²	137.5
5	Պատերից կերամիկական սաղիների քանդում	մ ²	27.3
6	Պատերից զսկի սվաղի քանդում	մ ²	122.8
7	Պատերից ցածրակալ սվաղի քանդում	մ ²	34.5
8	Միջհարկային քանդում	մ ²	10.7
9	Փայտե դռների ապամոնտաժում	մ ²	17.2
10	Փայտե պատուհանների ապամոնտաժում	մ ²	29.8
11	Պատուհանների շեղերի սվաղի քանդում	զհ.մ	60.6
12	Դռների շեղերի սվաղի քանդում	զհ.մ	22.1
13	Ելն աղբի խողովակում շինություն ներդրում	մ ³	43
14	Ելն աղբի բարձում ինքնաբերական միջ. տեղափոխում 5 կմ	մ ³	43

ՔՐԱ/ՄՍԽԱ. ՔՐԱ/ՄՍԽԱ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԼԱԳԻՐ			
Հ/Հ	Նկարագիր	Չափման միավոր	Քանակ
1	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
2	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
3	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
4	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
5	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
6	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
7	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
8	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
9	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
10	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
11	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
12	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
13	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
14	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
15	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
16	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
17	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
18	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
19	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
20	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
21	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
22	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
23	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
24	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
25	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
26	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
27	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
28	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
29	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
30	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
31	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
32	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
33	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
34	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
35	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
36	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
37	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
38	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
39	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
40	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
41	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
42	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
43	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
44	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
45	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
46	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
47	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
48	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
49	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
50	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
51	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
52	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
53	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
54	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
55	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
56	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
57	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
58	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
59	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
60	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
61	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
62	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
63	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
64	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
65	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
66	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
67	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
68	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
69	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
70	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
71	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
72	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
73	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
74	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
75	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
76	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
77	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
78	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
79	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
80	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
81	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
82	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
83	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
84	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
85	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
86	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
87	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
88	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
89	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
90	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
91	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
92	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
93	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
94	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
95	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
96	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
97	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
98	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
99	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7
100	Մետաղական ապամոնտաժում	մ ²	18.7

Երկրորդային օգտագործման համար պիտանի հումքի ծավալները չեն ներկայացվում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության N 87-Ա (06.02.2019) որոշումը առ այն, որ վերջիններս անհատույց սեփականության իրավունքով տրամադրվելու են շինարարության մրցութային կարգով ընտրված շինարար կապալառուին:

7.2 Ինժեներա-տեխնիկական և բանվորական անձնակազմ

Աշխատանքների բնույթից ելնելով բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ և մասնագիտացված:

Բազմապրոֆիլ բրիգադները տվյալ շինարարությունում անհրաժեշտ է ավարտուն շինարարական արտադրանքի ստեղծման նպատակով:

Բրիգադների քանակական և մասնագիտական-որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 1 հերթափոխով (8 ժամ) մասնագիտացված բրիգադներով:

Աշխատուժի անհրաժեշտ քանակը շինարարության համար որոշվում է համապատասխան աշխատանքների ծավալների և շինարարության տևողությանը:

Շինարարության մեջ զբաղված աշխատողների քանակը կազմված է՝

- հիմնական արտադրության վրա աշխատող բանվորներից՝ R հ,
- ոչ հիմնական արտադրության վրա աշխատող բանվորներից՝ R օ,
- ինժեներատեխնիկական անձնակազմից՝ Rիտա
- կրտսեր սպասարկող և պահակային անձնակազմից՝ Rկսպ:

Հիմնական արտադրության վրա աշխատող բանվորների քանակը ընդունվում է մեկ հերթափոխում բանվորների առավելագույն քանակի չափով

$R_{բանվ.} = (1.2-1.3)R_{max}$:

Ոչ հիմնական արտադրության վրա աշխատողների քանակը $(0.2-0.5)R_{max}$:

Ինժեներատեխնիկական անձնակազմը՝ հիմնական և ոչ հիմնական արտադրության վրա աշխատող բանվորների 11%, իսկ սպասարկող կրտսեր անձնակազմը՝ 3.2%, բացի այս արձակուրդում և հիվանդության պատճառով բացակայողների քանակը կազմում է ողջ աշխատողների գումարի 5-6 %-ը:

Շինարարական հրապարակում աշխատող բանվորների քանակի որոշման դեպքում պետք է հաշվի առնել նաև ոչ հիմնական արտադրությունում՝ տրանսպորտային, սպասարկման և այլ աշխատանքներում զբաղված բանվորների քանակը, որը վերցվում է 20-30% աշխատանքներում զբաղված բանվորների քանակից:

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքներ և տարածքի ջրցանի ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից: Կոյուղին միացված է համայնքային կոյուղատարին:

7.3 Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի պաշտպանություն

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը և գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս հաշվի են առնվելու քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգները:

Շինարարության ընթացքում ձեռնարկվելու են բնապահպանական կառավարման պլանով նախատեսված մեղմացնող միջոցառումները:

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները: Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները: Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Հետևողական մշտադիտարկումներ են իրականացնվելու շինարարական գործունեության բոլոր փուլերում՝ արձանագրելու շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամապատասխանությունները շինարարության ոլորտի համար սահմանված պահանջներին, նորմերին և չափորոշիչներին: Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողը կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Փոշենստեցման նպատակով տարածքում իրականացվելու է պարբերական ջրցան:

Թույլ չտալու համար նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան սարքին և մաքուր վիճակով: Բնահողով բարձրված մեքենաների թափքը խոնավացվելու է և ծածկվելու պոլիէթիլենային թաղանթներով՝ թույլ չտալու փոշու առաջացում և տարածում:

Երեկոյան ժամերին դադարեցվելու է աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

7.4 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը և տեխնիկական բնութագրերը բերված են ստորև.

Հ/Հ	Մեքենաների և մեխանիզմների անվանում	Մեքենաների մակնիշը և տիպը	Քանակ, հատ
1	2	3	4
1	Ավտոմեքենա	բեռնատվ. 25տ	4
2	Կողային ավտոմեքենա	բեռնատվ. 5տ	3
3	Ավտոբետոնախատմիչ	տարողութ-յունը 12խմ	2
4	Ավտոբետոնապոմպ	ԱԵՇ-6/Ա	1
5	Թորթամուրն	Makita	2
6	Թորթուավոր էքսկավատոր	Hyundai R290	1
7	Անիվավոր էքսկավատոր	CAT 428F	1
8	Ավտոամբարձիչ բեռնատվ. 32տ	KAMA3 53229-1040-15	1
9	Ջեռքի պնեվմատիկ	40կգ	1
10	Խորքային վիբրատոր	ԻՎ	3
11	Եռակցող ապարատ	T/DM-300C	4
13	Ջեռքի էլեկտրոգործիքներ	-	10

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում վտանգավոր նյութերի կիրառություն չի նախատեսվում: Շինարարական նյութերի պահեստավորումը կիրականացվի ըստ ՇԿՆ-ի:

**8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ
ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐ**

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով ՀՀ-ում գործող շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս նախաձռնողը ղեկավարվելու է քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցվելու են աղմկոտ աշխատանքների կատարումը:

8.1 Ազդեցությունների ընդհանուր նկարագիր

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

8.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- ցեմենտի փոշու արտանետումներ, տարածքում նախատեսվող բետոնահանգույցից
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

8.3 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել
- շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատասխան բարձրության
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում

անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով:
- իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

8.4 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

8.5 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնե մակերևույթի կամ պոլիէթիլենային ծածկի կամ փայտյա/մետաղական տակդիրների վրա
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ

մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

➤ աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

8.6 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

• Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

• Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

• Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

• Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

8.7 Հակահրդեհային միջոցառումներ

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու

նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց- հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

8.8 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգալուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՀՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 70 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շինհրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը չի գերազանցի սահմանված նորմերը և նույնիսկ միաժամանակ մի քանի շինտեխնիկայի աշխատելու դեպքում կգտնվի թույլատրելի սահմաններում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով կնախաձեռնվեն վերը նկարագրված լրացուցիչ միջոցառումները, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էքսկավատորը, իսկ ավարտին գլխորդ: Միաժամանակ այս երկու շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրներն էլ կրում են ժամանակավոր բնույթ: Էքսկավատորը աշխատելու է 10 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 85 դԲ: Գլխորդ տարածքի բարեկարգման ընթացքում՝ 6 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 80 դԲ: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ $\leq 200 \text{ կգ/մ}^2$: Շինության պատերը ևս հանդիսանում են միաժամանակյա աղմուկից պաշպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

$L_{աղ} = 23 \lg m_t - 10 \text{ դԲ}$, երբ $m \geq 200 \text{ կգ/մ}^2$

$L_{աղ} = 13 \lg m_t - 13 \text{ դԲ}$, երբ $m \leq 200 \text{ կգ/մ}^2$

Որտեղ $m = Km$ – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ^2 ,

K – գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը 200 կգ/մ^2 $K=1,3$

$M = 1,3 \times 200 = 260$

$L_{աղ} = 13 \lg m_t - 13 = 18,2 \text{ դԲ}$

Շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8 \text{ դԲ}$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը $RL_{ստ}$ ըստ աղույակ 2՝ կազմում է միջինը 50 դԲ:

$LA_{տար} = 66,8 - 50 = 16,8 \text{ դԲ}$

Գլխորդի համար՝

$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 80 - 18,2 - 50 = 11,8 \text{ դԲ}$

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլխորդի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր

է: Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները X0, Y0 և Z0 առանցքներով			
	Թրթռա արագացում		Թրթռա արագություն	
	մ/վրկ ² .10-3	դԲ	մ/վ .10-3	դԲ
2	10,0	80	0,79	84
4	11,0	81	0,45	79
8	14,0	83	0,28	75
16	28,0	89	0,28	75
31,5	56,0	95	0,28	75
63	110,0	101	0,28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0,28	75
Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով:				
Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:				

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8.9 Թափոնների կառավարում

Կառուցապատման աշխատանքների ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից

- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու թացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Կառուցապատման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինությունների կառուցման ընթացքում, շինարարական և կենցաղային աղբն է, որի տեղափոխման վայրը կճշտվի Վարդենիսի համայնքապետարանի հետ՝ շին. թույլտվության փուլում: Թափոնների ծավալային հաշվարկված ցուցանիշները ներկայացված են ստորև.

Շինարարական թափոնների ծավալը՝ $12 \times 24 \times 1.5 = 432$ խմ

Կենցաղային աղբի ծավալը՝ $12 \times 24 \times 0.5 = 144$ խմ

Շին.թափոնները կհավաքվեն համաձայն ՇԳՀ-ի, համաձայն որի, թափոնների համար նախատեսված 2 աղբաման, չափերը $1.5 \times 2.5 \times 2.5$: Դրանք կհեռացվեն համապատասխան թափոնավայր՝ համաձայն ՀՀ-ում գործող նորմերի և ընթացակարգերի: Կենցաղային աղբի տեղափոխման համար պայմանագիր կկնքվի Վարդենիսի համայնքապետարանի կոմունալ սպասարկում իրականացնող կազմակերպության հետ:

Վերը նշված թափոնները՝ համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 դասին:

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը
1.	Շինարարական աղբ	IV	9120060101004	432 մ ³
2.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	144 մ ³

Շինաղբի, ինչպես նաև վերը նշված թափոնների տեղափոխման վայրը կճշտվի Վարդենիսի համայնքապետարանի հետ՝ շին. թույլտվության փուլում:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

9. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Կառուցապատման աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ)

Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին
Ն Ա Խ Ա Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Փ ՈՒ Լ			
1. Հանրային լսումներ, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են նախատեսվող գործունեության իրականացման ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	1.1. Մանկապարտեզի կառուցման նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը անցկացրվել է 2024թ. հունիսի 27-ին, ժամը ` 14. 00 ին, Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանում: 1.2. Հանրային քննարկման հայտարարությունը օրենսդրությամբ սահմանված կարգով տպագրվել է «Առավոտ» օրաթերթի 30. 05. .2024 համարում:	Վարդենիսի համայնքապետարան
2. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	ԲԿՊ-ի պահանջներն անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ բնակելի համալիրի շինարարության և շահագործման փուլերում:	2.1. Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև կապալառուի պայմանագրային փաստաթղթերում:	Վարդենիսի համայնքապետարան
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ			
Առողջություն և աշխատանքային անվտանգություն			
3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲԿՊ-ի պահանջների չկատարումը և կառուցման բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող են շրջակա միջավայրի վատթարացման պատճառ դառնալ: Շինհրապարակի ոչ պաշտոնական կազմակերպման պատճառով աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած վնասվածքը անընդունելի է:	3.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: 3.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. (ցանկապատում, պահակակետ և այլ): 3.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը (օր. չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում և այլն): 3.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում և կիրառվող տեխնիկայում: 3.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության միջոցների առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում: 3.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անհատական պաշտպանության միջոցներով, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ): 3.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված	Վարդենիսի համայնքապետարան

		միջադեպերը պետք է գրանցել: 3.8. Աշխատողները պետք է անցնեն աշխատանքի անվտանգության հրահանգավորում, ինչը պատշաճորեն պետք է գրանցվի համապատասխան գրանցամատյանում: 3.9. Խստորեն պետք է պահպանվեն ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության պահանջներն ու նորմերը:	
Հանրության հետ կապ և հանրային իրազեկում			
4. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ	Ազդակիրների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում հնարավոր են նախատեսվող գործունեության ժամկետների հետաձգումներ:	4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ / տեղեկատվական վահանակներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության, նրա գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց և նրանց հեռախոսահամարների/ էլեկտրոնային հասցեների մասին: 4.2. Շին հրապարակում անհրաժեշտ է ունենալ բողոքների գրանցամատյան և նշանակել պատասխանատու անձ, ով 15 օրյա ժամկետում պետք է պատասխանի դիմորդին՝ հարցի լուծման վերաբերյալ:	Վարդենիսի համայնքապետարան
Շրջակա միջավայրի պահպանություն			
5. Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ, շինարարական այլ աշխատանքներ	1. Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուից առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցությունը; 2. Շին. աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճի հետևանքով ազդեցությունը:	5.1. Օդի աղբյուրման և փոշու կառավարում 5.1.1. Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում: 5.1.2. Օդի որակի չափագրումների իրականացում ըստ անհրաժեշտության՝ ազդակակիր անձանց բողոքների դեպքում: 5.1.3. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար: 5.1.4. Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով 5.1.5. Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով: 5.1.6. Անհրաժեշտ է ապահովել շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողների լվացումը: 5.2. Աղմուկի և թրթռումների կառավարում 5.2.1. Շին. հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին, իսկ չափագրումներ կիրականացվեն ըստ սահմանված ժամանկացույցի: 5.2.2. Աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին՝ սահմանափակվելով միայն թույլատրված ժամերի միջակայքում: 5.2.3. Մեքենաների ապահովվում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող	Վարդենիսի համայնքապետարան

		մեքենաների օգտագործման բացառում: 5.2.4. Շինարարության մեջ ներգրավված բանվորներին ԱՊՄ-ով, այդ թվում՝ ականջակալներով, ապահովում:	
6. Կենսաբազմազանություն	1. Բուսական աշխարհի վրա հնարավոր ազդեցություններ 2. Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցություններ	6.1 Նախատեսվող գործունեության տարածքում արժեքավոր և հատուկ պահպանության միջոցառումներ ենթադրող բույսերի տեսակները բացակայում են: Այնուամենայնիվ, շինարարական աշխատանքների ընթացքում պարբերական մոնիտորինգ և հսկողություն կիրականացվի հնարվոր դիսկերը բացառելու նպատակով: 6.2 Նախատեսվող գործունեության տարածքում արժեքավոր և հատուկ պահպանության միջոցառումներ ենթադրող կենդանիների տեսակները բացակայում են: Այնուամենայնիվ, շինարարական աշխատանքների ընթացքում պարբերական մոնիտորինգ և հսկողություն կիրականացվի հնարվոր դիսկերը բացառելու նպատակով:	Վարդենիսի համայնքապետարան
7. Կենսաբազմազանություն	1. Բուսական աշխարհի վրա հնարավոր ազդեցություններ 2. Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցություններ	6.1 Նախատեսվող գործունեության տարածքում արժեքավոր և հատուկ պահպանության միջոցառումներ ենթադրող բույսերի տեսակները բացակայում են: Այնուամենայնիվ, շինարարական աշխատանքների ընթացքում պարբերական մոնիտորինգ և հսկողություն կիրականացվի հնարվոր դիսկերը բացառելու նպատակով: 6.2 Նախատեսվող գործունեության տարածքում արժեքավոր և հատուկ պահպանության միջոցառումներ ենթադրող կենդանիների տեսակները բացակայում են: Այնուամենայնիվ, շինարարական աշխատանքների ընթացքում պարբերական մոնիտորինգ և հսկողություն կիրականացվի հնարվոր դիսկերը բացառելու նպատակով:	
Շինարարական հրապարակի կազմակերպում			
8. Շինհրապարակի կազմակերպում	Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ	8.1. Շին հրապարակն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես կառուցապատման ենթակա տարածքի ներսում: 8.2. Շին. հրապարակի կազմակերպման սխեմայում պետք է նշված լինեն շին. նյութերի պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն: 8.3. Անհրաժեշտ է նախատեսել ավազի, ցեմենտի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների, ինչպես նաև շինարարական աղբի պահեստավորումը փակ տարածքներում կամ դրանց ծածկումն անթափանց թաղանթներով: 8.4. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, համապա-	Վարդենիսի համայնքապետարան

		տասխան տեղեկատվական ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում: 8.5. Անհրաժեշտ է իրականացնել շենք ծածկումը շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով: 8.6. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց տեղամասերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում, տեղադրել նախագուշացնող նշաններ: 8.7. Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակի տարածքից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված լվացման կետերում:	
--	--	---	--

Երթևեկության կառավարում

9. Շինհրապարակ մուտք ու ելք գործող մեքենաներ	Երթևեկության հնարավոր ազդեցություններն են. • երթևեկության խափանումներ • երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ • փողու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ • հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում • շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհներին վնաս	9.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով: 9.2. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհների նախնական վիճակը: 9.3. Դեպի շինարարական հրապարակ մուտքն ու ելքը պետք է կազմակերպել ընդհանուր երթևեկության և հասարակական անվտանգության համար նվազագույն խոչընդոտներով: 9.4. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ: 9.5. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում: 9.6. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս: 9.7. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի արտահոսքը կանխելու համար: 9.8. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և դրանք փոխարինել պատշաճ վիճակում գտնվող մեքենաներով:	Վարդենիսի համայնքապետարան
--	--	---	---------------------------

Արտակարգ իրավիճակների կառավարում

10. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)	Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	10.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում: 10.2. Շինհրապարակը պետք է ապահովված լինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար: 10.3. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրական պահանջներին: 10.4. Վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է պահել ծածկված, ապահով և քնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված	Վարդենիսի համայնքապետարան
--	--	---	---------------------------

		անթափանց հատակով և պատնեշով: 10.5. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը: 10.6. Շին. աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: 10.7. Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարանների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: 10.8. Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ: 10.9. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար: 10.10. Արտակարգ պատահարի դեպքում դրանք պետք է գրանցվեն համապատասխան գրանամատյանում:	
Թափոնների և նյութերի կառավարում			
11. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ	Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, իրենցից ներկայացնում են պոտենցիալ վտանգ:	11.1. Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: 11.2. Կանոնավոր կերպով (ամենաուշը 3 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար: 11.3. Շին հրապարակի տարածքում անհրաժեշտ է հատկացնել շին. աղբի նախնական կուտակման վայր: 11.4. Շինարարական աղբը անհրաժեշտ է տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր՝ հատուկ սահմանված երթուղով: 11.5. Շինարարական հավաքված վտանգավոր թափոնները պետք է պատշաճ կերպով հավաքվեն և հեռացվեն համապատասխան արտոնագիր ունեցող	Վարդենիսի համայնքապետարան

		կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: 11.6. Պետք է կատարվեն թափոնների հեռացման վերաբերյալ համապատասխան գրանցումներ/գրառումներ՝ որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ և նախատեսվածի համաձայն: 11.7. Կենցաղային աղբի հավաքումը պետք է իրականացվի դրա համար նախատեսված տարրաներում և պարբերաբար հեռացվի համապատասխան աղբահավաք կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: 11.8. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շին. աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շին. աղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը:	
Աշխատողների վերապատրաստում			
12. Աշխատողների վերապատրաստում	իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:	12.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն; 12.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է իրազեկել աշխատանքի անվտանգության և տարբեր արտակարգ իրավիճակների դեպքում ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ:	Վարդենիսի համայնքապետարան
Աշխատանքային տեղամասի վերականգնում, բարեկարգում, տարածքի կանաչապատում			
13. Շինհրապարակի վերականգնում, տարածքի բարեկարգում 14. Կանաչապատում	Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շին. տեխնիկան, բոլոր շին պարագաները, շինարարական նյութերը, թափոնները և այլն:	14.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատը և այլն: 14.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները; 14.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից, հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը; 14.4. Անհրաժեշտ է կատարել նախագծով նախատեսված բարեկարգման աշխատանքները: 14.5. Անհրաժեշտ է ապահովել կանաչապատման աշխատանքները՝ դրանք համաձայնեցնելով Վարդենիսի համայնքապետարանի հետ:	Վարդենիսի համայնքապետարան
ՀԵՏՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ			
15. Թերությունների վերացման աշխատանքներ	Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները	15.1. Անհրաժեշտ է ապահովել նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատճառ իրականացումը:	Վարդենիսի համայնքապետարան

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ/ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Վայր/ Գործողություն/ Փուլ	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխանատուներ	Մոնիտորինգի հաճախականություն
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ						
1. Հանրային լուծումներ և կապը հանրության հետ	- Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ - Ազդակիր կողմերի տեղեկացվածությունը ԲԱՄ-ի վերաբերյալ	շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգումներ, - տուգայցեր շին տեղամասեր, - հանրային լուծումներ, - բողոքների գրանցամատյանի ստուգումներ	Բողոքներին արձագանքման մեխանիզմն իրականացվել է բոլոր պահանջներին համապատասխան	Վարդենիսի համայնքապետարան	Հանրային լուծումները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ, ԲԱՄ-ը
2. Շրջակա միջավայրի պահպանություն	- փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ, աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում - Կենսաբազմազանության պահպանություն	շին. հրապարակ,	- ակնադիտական ստուգումներ՝ շին. հրապարակ ստուգայցերի միջոցով, - բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում; - փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային չափում և վերլուծություն: - Ֆլորայի և ֆաունայի արժեքավոր տեսակների կամ ծառատեսակների իդենտիֆիկացում, եթե կան այդպիսիք:	- գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը, - փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում - տեսակի անվանում, քանակ, նկարագիր, տեղադիրք	Վարդենիսի համայնքապետարան	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	- շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	- փաստաթղթերի ստուգում	- Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը համապատասխանում է պետ. մարմինների կողմից թույլատրված տարածքին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	Վարդենիսի համայնքապետարան	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
4. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	- երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; - հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը, ճանապարհներին և այլ կառույցներին պատճառ-	Ճանապարհների օգտագործում սարքավորումների և նյութերի տեղափոխության համար, շին. հրապարակի մոտեցման մուտքերը	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր	- Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	Վարդենիսի համայնքապետարան	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

	վող վնասներ:					
5. Թափոնների և շին. նյութերի կառավարում	- Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում	շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ, թափոնավայրեր կատարած ստուգայցեր	- շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում, - թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:	Վարդենիսի համայնքապետարան	
6. Շինհրապարակի վերականգնում, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների, սանիտարահիգիենիկ կանոնների պահպանում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	- շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված է:	Տեղամասեր կատարած ստուգայցեր	- Աշխատողների սանիտարահիգիենիկ պայմանները համապատասխանում են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին: - Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված մոնիթորինգն իրականացված է: - Շինհրապարակի վերականգնման և բարեկարգման պլանն առկա է: - Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:	- Պահպանված են շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից,	Վարդենիսի համայնքապետարան	
Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն (Թ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Ց Մ Ա Ն) Փ ՈՒ Լ						
7. Թերությունների վերացման աշխատանքներ	- Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ	բնակելի համալիրի տարածքի սահմաններում	Չափումներ	Աղմուկի, թրթռումների, հողի և օդի որակի չափագրումներ՝ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին:	Վարդենիսի համայնքապետարան	
8. Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Բարեկարգման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ		

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստավոս

30.09.2024

ԿՈՐԵԼ Է

Սարիաճա Սաճվելի Անտաշյանի՝ Երեւանի էլեկտրոհաշփողական մեքենաների տեխնիկումից 1992 թ. ստացված թիվ ՊՏ-1 408950 դիտյունը, գրանցման թիվ 5477: Քանարել անվավեր:

ՔԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21.06.2014թ. 30-110-Ն) համաձայն, ինչդեռ Շառե ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2024թ-ի հունիսի 28-ին ժամը 11:00-ին ՀՀ Արմավիրի մարզի Սեւանոր համայնքի Երասխահուն գյուղի վարչական ղեկավարի նստավայրում տեղի կունենան «ՀՀ Արմավիրի մարզի Սեւանոր համայնքի Երասխահուն գյուղի միջնակարգ դպրոցի կառուցում» նախատեսվող գործունեության վերաբերյալ 1-ին հանրային խորհրդակցությունը: Նախատեսվող գործունեությունը նախաձեռնվում է «ԼՈՒՔ» ՍՊ ընկերության կողմից (հասցեն՝ ք. Երեւան, Բաղրամյան 232, բն. 28): Շահագրգիռ հանրության կողմից զրափոր կամ բանավոր առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները կարող են ներկայացվել մինչև 27.06.2024թ.-ի ժ. 18:00: Քանարել լսման համար լիազորված անձն է Սեւանորի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի ղիխավոր մասնագետ-նարտարադետ Սարգիս Սահակյանը: Էլ-փոստ, serkis2222@bk.ru, Դեռ. 043 130424:

Վարդենիս համայնքի հարգելի բնակիչներ,

Քանաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (21.06.2014թ. 30-110-Ն) ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ 2024 թվականի հունիսի 27-ին, ժամը 14:00-ին Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանում տեղի կունենա հանրային քննարկում:

Օրակարգում դրված է ՀՀ Գեղարքունիք մարզի Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի հիմնադրոգման հարցը, որի համար անհրաժեշտ է կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն:

Շահագրգիռ հանրության կողմից առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները կարող եք ներկայացնել բանավոր՝ հանրային քննարկման ընթացքում, կամ գրավոր՝ ծանուցումից հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում:

Գրավոր ծանուցումները կարող եք ուղարկել verdenis.gegharqunik@mta.gov.am էլեկտրոնային հասցեին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզ Վարդենիս համայնքի թիվ 1 մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի հիմնանորգման նախագծի և շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում

2024 թվականի հունիսի 27-ին ժամը 14:00 համաձայն «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325- Ն որոշմամբ սահմանված կարգի տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի թիվ 1 մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի հիմնանորգման նախագծի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության հանրային քննարկումը (1-ին փուլ):

Հանրային քննարկման մասին հայտարարությունը սույն թվականի մայիսի 30-ին տեղադրվել է Առավոտ օրաթերթում և Ազդարար իրազեկման կայքում:

Ծրագրի անվանում՝ Վարդենիս համայնքի Վարդենիսի թիվ 1, թիվ 2 Ակունք և Նորակերտ բնակավայրերի մանկապարտեզների կապիտալ նորոգում և գույքի ձեռքբերում

Ծրագրի իրականացման կազմակերպություն՝ Վարդենիսի համայնքապետարան

Մասնակցում էին

Ա. Եղիազարյան	Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական
Ա. Մկրտչյան	Վարդենիս համայնքապետարանի աշխատակազմի գնումների, զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ
Ա. Աբգարյան	Վարդենիս համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնի պետ
Ռ.Զաքարյան	Վարդենիս համայնքապետարանի աշխատակազմի գնումների, զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի առաջատար մասնագետ

Ելույթ ունեցան

Բացման խոսքով հանդես եկավ Ա. Եղիազարյանը նշելով, որ մասնաշենքի հիմնանորոգման արդյունքում նախադպրոցական ուսումնական հաստատությունը ծառայությունը կմատուցի առավել բարեկարգ պայմաններում: Ա. Աբգարյանը նշեց, որ մանկապարտեզի շենքում վերանորոգման աշխատանքներն իրականացնելիս պահպանվելու են հենաշարժողական խնդիրներ ունեցող և տեղաշարժման սակավ հնարավորություններ ունեցող անձանց համար համապատասխան պայմանները:

Մասնակիցները բարձրացրեցին իրենց հարցերը:

1. Հարց: Քանի՞ երեխայի համար է նախատեսված մանկապարտեզի նոր կառուցվող մասնաշենքը

Պատասխան: Նոր կառուցվող մասնաշենքը հնարավորություն կտա թիվ 1 մանկապարտեզների սաների ներկա թիվ հասցնել մինչև 170-ի

2. Հարց: Եինարարությունը ե՞րբ է ավարտվելու

Պատասխան: Եինարարությունը ավարտվելու է մինչև 2026 թվական

3. Հարց: Արդյո՞ք նոր մասնաշենքի կառուցումը հնարավորություն կտա մանկապարտեզին դառնալ երկարօրյա:

Պատասխան: Նախատեսվում է մասնաշենքը դարձնել երկարօրյա

Ձեռնարկող

Վարդենիսի համայնքապետարան Վարդենիս
համայնքապետարանի աշխատակազմի գնումների,
գարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,
սպասարկման և գովազդի բաժնի պետ
Ա.Մկրտչյան

Վարդենիս համայնքի
ղեկավար













Ա. Խաչատրյան

Արձանագրության կցվում է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝
համապատասխան ստորագրություններով

Հանրային լսում Վարդենիս քաղաքում

Նպատակ՝ Գեղարքունիքի մարզ Վարդենիս համայնքի թիվ 1 մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի հիմնանորոգման նախագծի և շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկման մասնակիցների ցուցակ

Ամսաթիվ՝ 27.06.2024թ.

N	Անուն, Ազգանուն	Համայնք	Բնակավայր	Ստորագրություն
1.	Քաղաքացիական Եմբեմ	Վարդենիս	ՄԿ Եմբեմ	
2.	Գալստյան Զինա	Վարդենիս	Մեր	
3.	Մեջակյան Ներսիս	Վարդենիս	Ֆ. Վարդենիս	
4.	Կարապետյան Ծովա	Վարդենիս	Ֆ. Վարդենիս	
5.	Խաչատրյան Վերա	Վարդենիս	Ֆ. Վարդենիս	
6.	Իսախանյան Մանուկ	Վարդենիս	Վարդենիս	
7.	Զարոյան Զեյնե	Վարդենիս	Վարդենիս	
8.	Խաչատրյան Վարդենիս	Վարդենիս	Վարդենիս	
9.	Գալստյան Զարգուհի	Վարդենիս	Վարդենիս	
10.	Լուսինե Վարդենիս	Վարդենիս	Վարդենիս	

11.	Therapiefür Offiziere	Lehrbücher	6. Auflage	Best
12.	Lehrbuch der Chirurgie	Lehrbücher	4. Auflage	Best
13.	Lehrbuch der Anatomie	Lehrbücher	Lehrbücher	Best
14.	Lehrbuch der Physiologie	Lehrbücher	Lehrbücher	Best
15.	Lehrbuch der Pathologie	Lehrbücher	Lehrbücher	Best
16.	Lehrbuch der Therapie	Lehrbücher	Lehrbücher	Best
17.	Lehrbuch der Hygiene	Lehrbücher	Lehrbücher	Best
